



ՅԱԿՈԲ ԶՈԼԱՔԵԱՆ
Պատմական գիտ. դոկտոր

ՔԵՍԱՊԻ ՀԱՅՈՑ ՍՐԲԱՅՈՒԼՍԾ ԾԱՌԵՐԸ¹

ՄՈՒՏՔ

Սուրիական Արաբական Հանրապետության մէջ բնիկ հայութիւն մը ունեցող շրջան է Քեսապը: Ան հարուստ է անտառներով եւ ունի զարգացած պարտիզամշակութիւն: Ծառը՝ վայրի թէ մշակովի, հիմնական դեր ունի տեղացի հայոց տնտեսութեան մէջ: Հետեւաբար ան լայն չափով ներկայ է Քեսապի հայոց բարբառին, հաւատալիքներուն, ըմբռնումներուն եւ բանահիւսութեան մէջ եւս:

Յօդուածը կը ներկայացնէ Քեսապի մէջ հոս ու հոն գտնուող որոշ ծառերու հանդէպ ժողովրդային նախապաշարեալ մօտեցումը, թէ անոնք սրբացուած են եւ ի վերուստ պաշտպանուած:

Սրբացուած ծառերը կը պատկանին փշակաղնի, դափնի, սօսի եւ ձիթենի ծառատեսակներուն:

1. ՓՇԱԿԱՂՆԻ

Բարբառով՝ փըշըկաղնա. Fagaceae ընտանիքի Quercus coccifera, կը կոչուի նաեւ Kermes eiche: Թուփ կամ միջակ ծառ, որ մեծ խտութեամբ կ'աճի գրեթէ ամեն տեղ՝ մանաւանդ Գարատուրանի հիւսիսային լեռներուն վրայ: Մանր փուշով երիզուած մուգ կանաչ խիտ ու կարծր տերեւ ունի: Պտուղը նման է կաղնիի կաղինին, ծածկուած է կարծր կեղեւով ու նստած է բաժակաձեւ օղակի մէջ: Թփուտներուն մէջ բազմացողուն է,

¹* Ստացուել է՝ 1.02.2024, գրախօսուել է՝ 9.02.2024:

Էլ. հասցէ՝ hagopcholakian@hotmail.com:

բազմաոստ: Ծառի պարագային կը ձեւաւորուի բարձր ցօղունը: Այծերու սիրած վայրերը այս թփուտներն են: Փայտը շատ կարծր է՝ դիմացկուն: Աւանդական տան կարգ մը բաժինները կը շինուէին փշակաղնիի փայտով: Փայտն ու ցախը ընտիր վառելանիւթ են, կայծ կը պահեն, մեծ տաքութիւն կու տան:

Փշակաղնին ածուխի արդիւնաբերութեան մէջ շատ կը գործածուի: Կը պատմուի, որ ԺԹ. դարուն ածուխի կապալառուն Կիւնիկ լեռան ամբողջ թփուտները արմատախիլ ընել կու տայ գիւղացիներուն, աշխատանքի փոխարէն բացուած գետիններն օգտագործելու արտօնութիւն տալով անոնց: Լեռն ամբողջութեամբ կը լերկանայ ու դարաւանդներով ցանքատարածութիւններու կը վերածուի: Թոնիրի համար շալակով ցախ գտնելու համար կիներ խումբով կ'երթային շատ հեռուները: Այժմ, երբ լքուած են լեռնային ցանքատարածութիւնները, փշակաղնիի թփուտները դարձեալ ծածկած են լեռը:

Փշակաղնիի թարմ ոստերով պատրաստուած թէյը լոյծի դէմ զօրաւոր դեղ է:

Սրբավայրերու տարածքին փշակաղնին սրբացուած ծառ է: Սրբավայրի տարածքէն դուրս այդ ծառատեսակն այդպէս չի դիտուիր: Պարտէզներուն մէջ, ամենուրեք, փշակաղնին արմատախիլ ըլլալու դատապարտուած վայրի ծառ է, բայց սրբավայրի փշակաղնին անձեռնմխելի է: Քեսապի շրջանին մէջ այդ սրբավայրերը կը կոչուին Կիղիցիկ, որ եկեղեցի-կիղիցա բառին փաղաքշականն է, թէեւ այդ բառով պէտք չէ հասկնալ փոքրիկ եկեղեցի կամ մատուռ: Կիղիցիկները կանգուն կառոյցներ չեն, հնավայրի մը մէկ անկիւնը, գիւղամէջին կամ անկէ դուրս, հեռաւոր արտերուն մէջ գտնուող սրբատեղիներ են, ուր կարելի է տեսնել կիսակլոր խորանաձեւ կառոյցի մը մնացորդը, հիմքային քանի մը շարք քարեր կամ սրբացուած փշակաղնի մը, անոր տակ գտնուող մէկ-երկու սրբատաշ քար կամ մօտիկ բնակավայրին լքուած կամ մինչեւ օրս գործող գերեզմանատունը²:

Հաստատապէս կարելի է ըսել, որ այս սրբատեղիները ժամանակին կանգուն գիւղական փոքրիկ եկեղեցիներ էին: Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին պատկանող ցուցակի մը մէջ, որ թարգմանաբար հրապա-

² Յ. ՉՈՒԱՔԵԱՆ, Քեսապի շրջանի եկեղեցական հին կառոյցները յարանուանական համայնքներու բաժանումէն առաջ, «Հայագիտական հարցեր», 2019, 1(16), էջ 103–120:

րակած է Ա. Սաֆրաստեանը, կը յիշատակուին Հալէպի վիլայէթի Ճսըր Շուղուր կազայի հետեւեալ գիւղերուն եկեղեցիները³.

1. Քեսապ գիւղ, Ս. Աստուածածին եկեղեցի, «հնուց»:
2. Գայաճըզ (Սեւ աղբիւր), Ս. Սարգիս եկեղեցի, «հնուց»:
3. Զինարճըք, Ս. Պօղոս եկեղեցի, «հնուց»:
4. Էսքի-օրէն (Ներքի գիւղ, Ասկիւրան), Ս. Ստեփանոս եկեղեցի,

«հնուց»:

5. Գարատուրան, Ներքին թաղ, Ս. Աստուածածին եկեղեցի, «հնուց»:
6. Գարատուրան, Վերին թաղ, Ս. Աստուածածին եկեղեցի, «հնուց»:

Ասոնցմէ միայն առաջինն է Քեսապի եկեղեցին, որ տակաւին կը գործէ: Գարատուրանի այժմու եկեղեցին նոր կառոյց է: Միւսներն այժմ կամ անյայտ են, կամ կը յիշուին իբրեւ կիղիցիկ: Այս ցանկէն դուրս կան նաեւ այլ կիղիցիկներ:

Բոլոր կիղիցիկներն ալ հնավայր-ուխտավայրեր են կամ եղած են: Հոն կ'երթան մանր ուխտեր կատարելու՝ աքլոր մը կամ երկու աղանի զենելու, կը պատահի նաեւ խոյ: Ամեն կիղիցիկ ունի իր տարածքը: Բոլոր բնակիչները կը ճանչնան կիղիցիկի սահմանները: Կը հաւատան, թէ ան ունի իր ոգեղէն պահապան սուրբը՝ Կիղիցիկ Պապուկը: Ան երեւակայական մարդակերպ սուրբ էակ մըն է, ըստ հաւատացողներու պատկերացումներուն՝ սպիտակահեր, երկար մօրուքով, ձեռքին՝ մահակ: Կիղիցիկի տարածքն անձեռնմխելի է, այդտեղէն վառելափայտ, պատի քար կամ անոր պատկանող որեւէ բան առնել տանիլը պատժելի արարք է: Բազմաթիւ զրոյցներ կը պատմուին, թէ ինչպէս Կիղիցիկ Պապուկը գիշերը՝ մարդուն անկողին եղած ատեն, կը յայտնուի ու կը պահանջէ աւանդին վերադարձը: Յանցագործը շնչակտուր կ'արթննայ ու կը կատարէ հրամանը, կը հանգստանայ:

Կիղիցիկներու անուան հետ կը կապուին նաեւ մօտիկ աղբիւր մը կամ ջրհոր մը եւ հնավայր մը: Կը հաւատան, որ աղբիւրի ակունքներուն մէջ կը բնակի արվանաք, որ Քեսապի բարբառով կը նշանակէ վիշապ: Արվանաք զրոյցներուն մէջ կը պատկերացուի գլխաւորաբար օձի կերպարանքով՝ թռչող օձ, եղջիւրաւոր օձ: Արվանաք գանձին պահա-

³ Ա. ՍԱՖՐԱՍՏԵԱՆ, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատութեան եւ դաւանանքների նախարարութեան ներկայացուած հայկական եկեղեցիների ու վանքերի ցուցակներն ու թաքրիրները, «էջմիածին», Թ.-Ժ., 1966, էջ 123:

պանն է: Գանձը կրնայ աղբիւրի ակը ըլլալ, հնավայրին մէջ գտնուող իրական գանձ մը կամ կիղիցիկի սրբութիւնը: Գանձախոյզներ յաճախ գաղտնի պեղումներ կ'ընեն կիղիցիկներու տարածքին մէջ: Կիղիցիկ Պապուկն ու արվանտը կ'ապրին նոյն միջավայրին մէջ: Սրբավայրին վնաս հասցնողներուն պատժելու դերով հանդէս կու գայ նաեւ արվանտը: Ասիկա իւրայատուկ պարագայ մըն է, ուր սուրբը եւ վիշապը համերաշխ կ'ապրին⁴:

Կիղիցիկներու փշակաղնին բարձր ցօղունով խոշոր ծառ է եւ կը տարբերի կիղիցիկէն ներս կամ դուրս գտնուող վայրի թփուտներէն: Ազատ բնութեան մէջ, երեւի փայտահատութեան հետեւանքով, կարելի չէ կիղիցիկներու փշակաղնիներու մեծութեամբ ծառ գտնել:

Այդպիսի հսկայ փշակաղնիներ ունին հետեւեալ կիղիցիկները:

Գաւառուտան գիւղի Ս. Աստուածածին կիղիցիկը: Սա վերի թաղի Ս. Աստուածածինն է՝ Գալեմտէրեան-Մանճիկեան թաղին մէջ: Սրբավայրէն մնացած են միայն կիսաշրջանակաձեւ խորանով հիմքի քարերը՝ մօտաւորապէս 7×3 մ տարածութեամբ: Հսկայական փշակաղնին կը գտնուի հարաւային կողմը եւ իր շուքին տակ կ'առնէ բուն սրբավայրը: Կիղիցին մէջ կայ նաեւ դափնի ծառերու պուրակ մը: Այստեղ՝ փշակաղնիի շուքին, ուխտեր կը կատարուին, ուխտապուր (կիղիցիկէպէտօր՝ կիղիցիկ-պուր) կը պատրաստուի, ու հաւաքական ճաշ կ'ըլլայ ամռան եղանակին: Ուխտապուրն աքլորի միսով սիսեռով-ձաւարով պատրաստուած փիլաւն է: Ճաշը կ'եփուի ծառին տակ՝ կիղիցիկի տարածքէն հաւաքուած փայտերով: Շրջապատը միշտ մաքուր կը պահուի:

Եկեղեցին 1858-ին կը վերանորոգուի, բայց երկար ատեն կանգուն չի մնար: Կաթոլիկութեան յարած Յովհաննէս Ղալանտէրը քանդել կու տայ եկեղեցին: Դատերը արդիւնք չեն տար: Վէճերը կը սաստկանան⁵: Եկեղեցին կամաց-կամաց ամբողջութեամբ կը քանդուի, բայց կը մնայ վերի թաղերու բոլոր հայոց սիրելի ուխտավայրը՝ կիղիցիկը:

Զրոյցներ կան, որ մարդիկ իրենց կալուածն ընդարձակելու համար ընդհուպ քար վերցուցած ըլլան կիղիցիկի տարածքէն. կը պատմուի

⁴ Կիղիցիկ Պապուկի եւ արվանտի մասին տես Յ. ՉՈՒԱՔԵԱՆ, Վիշապը Քեսապի հայոց աւանդադրոյցներուն, հաւատալիքներուն ու պատկերացումներուն մէջ (տես «Վիշապը հեքիաթի եւ իրականութեան սահմանին», Երեւան, 2019, էջ 215–224):

⁵ ԶԱՔԱՐԻԱ ՎՐԳ. ԶՄԻՌՆԻԱՅԻ, Թղթակցութիւն Լաթաքիոյ, «Սիօն», Երուսաղէմ, 1866, էջ 152:

նաեւ, որ վնասած են արվանտին: 23 յուլիս 1974-ին մօտիկ ջրհորին մէջ արկած կը պատահի, 11 հոգի կ'իյնան ջրհորին մէջ. հինգը կը մահանան: Ոմանք կը հաւատան, որ այստեղ չարիքի մը մատը կար: Կիղիցիկ Պապուն ու արվանտը պատժեցին թաղեցիները: Ոմանք կը համարձակէին ըսել. «Թի գիտիս արվանտը պըղից գիրին» (Կարծես արվանտը կլանեց գիրենք), թէեւ եղածը պարզապէս թունաւորում նկատողներուն կողմէ կշտամբանքի կ'արժանանային⁶:

Գարատաշի կիղիցիկը: Գարատաշ թաղը կազմուած է 1942-ին՝ Գարատուրանի մէջ պատահած գետնասահքին տուն ու տեղ կորսնցուցած ընտանիքներու տեղակայումով: Այստեղ՝ ձորակի մը եզրին, կը գտնուէր կիղիցիկ մը եւս, կ'երեւէին փոքրիկ շինութեան մը հետքերը՝ հսկայ ու առանձին փշակաղնիի մը շուքին տակ: Գիւղացիք փոքրիկ մատաղներ գենելու կու գային հոն: Գարատուրան-Քեսապ ճամբու վրայ խաչ մը կը հանէին ու կը հանգչէին հսկայ փշակաղնիին տակ: Փշակաղնին միակ ծառն էր շրջակայ արտերուն մէջ: Ըստ զրոյցներու՝ այստեղ գանձախուզական պեղումներ կատարուած են, կիղիցիկի տեղն անյայտ է, ծառն ալ չկայ: «Ինչուէն քուրեմէն իֆլախ չիղուն» (Ընողին սերունդները չաջողեցան),– կ'ըսեն ոմանք:

Ս. Ստեփանոս կիղիցիկը: Սա կը գտնուէր Քեսապի հարաւային մուտքին քանի մը հսկայ փշակաղնիներու շուքին տակ: Գետնասահքի մը պատճառով անհետ կորսուեցաւ: Կը պատմուի, որ հոս ալ ուխտեր կը կատարուէին, եւ ուխտապուր կը պատրաստուէր պուրակին մէջ:

Ս. Մարութ կիղիցիկը: Ոչ միայն տեղացի հայոց, այլեւ ալաւիներուն համար սիրելի սրբավայր է, կը գտնուի Քեսապի մուտքին բլուրի մը վրայ, որ ամբողջութեամբ ծածկուած է փշակաղնիի պուրակով: Շուրջը խնամուած պարտէզներ են: Ուխտաւորներ հոն զոհեր կը մատուցեն, ուխտեր կը կատարեն ու կը շարունակեն խնամք տանիլ անոր, որ դէպի արեւելք նայող պատին մէջ երեք մեծկակ խորշ ունի, կեդրոնի խորշը խորանաձեւ է: Ս. Մարութէն միակ կիղիցիկն է, որ առնուած է Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղականութեան հսկողութեան տակ, ունի բարեկարգուած շրջափակ, խորանաձեւ խորշը ցանցապատուած է: Ուխտաւորները հոս

⁶ Քեսապի մէջ ցաւալի արկածով խեղդամահ եղան հինգ հոգի (տե՛ս «Ազգակ», 1 օգոստոս, 1974, էջ 3):

⁷ Գարատուրանի աղէտը (տե՛ս «Հասկ», 1942, թիւ 1–2, էջ 27), Գարատուրանի տնակներու շինութիւնը (տե՛ս «Հասկ», 1944, թիւ 5–7, էջ 103):

նուէրներ կը բերեն ու գումար կը դնեն պնակին մէջ: Հաւաքուած գումարը ամեն շաբաթ ժամկոչը հաւաքելով կը յանձնէ թաղականութեան: Հոս եւս հաւատք ստեղծուած է, որ Կիլիցիկէն որեւէ բան վերցնելը ծանրագոյն մեղք է ու պատժելի է ի վերուստ: Ոչ ոք կը փորձուի պուրակէն փայտ կամ ցախ կտրել, պնակէն գումար գրպանել: Այստեղ գործած գանձախոյզներուն պատահած դժբախտութիւններուն մասին եւս զրոյցներ կան:

Քէօրքիւնէ գիւղի փշակաղնին: Գիւղին կից՝ հարաւային կողմը, կը գտնուի գերեզմանատունը: Հոն է նաեւ Ս. Ստեփանոսի անուան կիլիցիկը: Գիւղի տարեցներէն Սիրվարդ Աբէլեանը՝ ծնեալ Չէլէպեան, կը պատմէր, թէ իր մեծ հօր հայրը՝ Ստեփանոս անուն, եղած է մատուան վերջին եկեղեցականին՝ տէր Ստեփանոսի մտերիմ բարեկամը: Իբր տէր Ստեփանոս կը ցաւի եղեր իր խեղճացած հօտին ու անշքացած եկեղեցւոյ համար: Ան խնդրած է գիւղացի Ստեփանոսէն, թէ «երբ մեռնիմ, զիս եկեղեցւոյ դուռը թաղեցէք»: Սուրբ մարդ նկատուած է տէր Ստեփանոսը: Ծերունի հոգեւորականը կ'անյայտանայ: Գիւղացիք ի զուր կը փնտռեն զինք երկար ժամանակ: Հաւատք կայ, թէ ոգեղինացած դեռ կ'ապրի այդ սուրբ վայրին մէջ, ուր ոմանց կը յայտնուի քունի ընթացքին՝ ճիշդ Գարատուրանի վերի թաղի սրբավայրին մէջ ապրող Կիլիցիկ Պապուկին պէս: Հոս եւս մարդիկ կը հաւատան, որ արվանտ կայ:

Տէր Ստեփանոսէն ետք մատուռը ուրիշ եկեղեցական չ'ունենար: Կը լքուի, բայց իր սրբութիւնը չի կորսնցներ, ուխտատեղի կը դառնայ: Շէնքը կը փլի, բայց խորանը մինչեւ ժԹ. դարու վերջը լրիւ կանգուն կը մնայ: Անասուններու համաճարակէ ու այլ հիւանդութիւններէ վախցած գիւղացիք իրենց այծերու հօտերը կը քշէին ուխտատեղի: Խորանին պատուանդանին վրայ ցատկող առաջին կենդանին մատաղցու կ'ընտրէին ու տեղւոյն վրայ կը զենէին: Ասիկա հօտը հիւանդութիւններէ կը փրկէր:

Մատուան տեղը աճած հսկայ փշակաղնին անձեռնմխելի է: Կը հաւատան, որ անկէ ցախ ու փայտ վերցնելը փորձանքներ կը բերէ, անբուժելի հիւանդութիւններու պատճառ կը դառնայ, նոյնիսկ օրինակներ կու տան: Ծառին ցօղունը երկու գրկաշափ հաստութիւն ունի: Ծառի աճման ընթացքին խորանի պատը հետզհետէ մնացած է ցօղունին մէջ: Անոր մէջ՝ 80 սմ բարձրութեան վրայ, կիսովին թաղուած քանի մը քարեր տակաւին կ'երեւին: Մէկուն տակ գոյացած խոռոչին մէջ ուխտատուներ մետաղադրամ կը դնեն, իսկ ծառին տակ ուխտի աքլորներ կը մորթեն: Գերեզմանատունը ատենը մէջ մը վայրի թուփերէ մաքրողներ երբեք ձեռք չեն տար այս ծառին:

Սրբավայրի զօրութեան հաւատացած են նաեւ ալեւիներն ու թուրք-մէնները: Անոնք նախապէս գիւղին կու տային Զիարաթ Քէօյ (սրբավայրի գիւղ) անունը:

Էքիզօլուքի փշակաղնին: 1904-ին Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանի տունեալներով՝ հայ եկեղեցւոյ վիճակ կը նկատէ Էքիզօլուք գիւղը⁸, թէեւ, գիտենք, որ գիւղն ամբողջապէս բողոքականութեան յառած էր դեռ 1882-ին: Նախապէս կիղիցիկ մը ունեցած ըլլալուն մասին բան չենք գիտեր, բայց գիւղի գերեզմանատունը կը կոչուի Զիարաթ, որ կը նշանակէ նաեւ ուխտավայր: Գերեզմանատան եւ հին թաղին միջեւ կը գտնուի աղբիւրը՝ արտերու եւ ածուներու մէջ: Հարկւրամեակ մը առաջ այդ կողմերը բնակութիւն չկար, գիւղը ծուարած էր հիւսիսային լեռնագօտին ստորոտը: Աղբիւրէն քիչ անդին կը գտնուէր հսկայ փշակաղնի մը՝ միակ ծառը շրջակայ ածուներուն մէջ: Ծառին հրապարակը զբօսարան-սրճարանի վերածած էին սուէտիացիները, որոնք 1939-ին՝ Լիբանան տեղափոխուելու շրջանին, միջոց մը մնացած են Պասիթ եւ Քեսապի գիւղերուն մէջ: Այդ ծառին խնամուած ըլլալը անոր ժամանակին սրբացուած ըլլալուն ապացոյց էր:

2. ՍՕՍԻ

Բարբառով՝ սուսա, Platanaceae/սօսազգիներու ընտանիքին պատկանող platamus: Հսկայական ծառերու տեսքով կ'երեւի գետահովիտներուն մէջ՝ ջրոտ տեղերը: Երկար կոթունով տերեւը թաթածեւ է՝ բլթակաւոր, փոշոտ: Տերեւաթափի կ'ենթարկուի, պտուղը կլոր կոն է՝ փափուկ փուշով ծածկուած: Յօղունն ու ճիւղերը մոխրագոյն սպիտակամորթուն են: Այսպիսի հսկայ ծառերու շուքին կը մակաղէին ջուրի իջած այծերու հօտերը: Փայտը շինարարութեան մէջ քիչ կ'օգտագործուի, վառելանիւթ կ'ըլլայ: Դաստակի վրայ աճած գորտիկը՝ զընէն (կոծիծ), բուժելու նպատակով՝ հիւանդը սօսիի կոն մը կ'առնէր ու կը նետէր ճախճախուտի մը մէջ: Կ'ըսեն՝ մինչեւ կոնին փախլը գորտուկն ալ կը փախ:

Անտիոքի բովանդակ շրջանի հայ գիւղերուն մէջ խոշորագոյն սօսի ծառը կը գտնուի Մուսա լեռան Խտրպէկ գիւղին մէջ: Յօղունին շրջագիծը 24 մեթր է, բարձրութիւնը՝ աւելի քան վաթսուն: Սենեակի մը ծաւալին չափ է փշակը (բունի պարապութիւնը), ուր երկու նժոյգ կարելի է պատս-

⁸ Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1904, էջ 390:

պարել միանգամայն: Ատեն մը ծառայած է իբրեւ խանութ եւ սրճարան: Սօսին գիւղին կեդրոնը եւ գեղջուկներուն զբօսավայրն էր, ուր Վարդավառի տօնը մեծահանգէս շուքով կը կատարուէր բոլոր գիւղերու մասնակցութեամբ⁹: Խտրապէկի սօսին մինչեւ հիմա նոյնութեամբ շուք կ'ընէ շրջապատին ու քովէն անցնող գետակին վրայ: ՎագրՖցի Մուսա էմլէքեանը 2009-ին կը պատմէր. «Հիմա Խտրապէկ հաստատուած թուրքերը կը հաւատան, որ հայերուն սուրբերը Սօսի ծառին մէջ կ'ապրին, չեն կտրեր ճիւղերը, տակը կը նստին կը գուարճանան: Անգամ մը, գետակի ափին, Սօսին տակ հարսանեաց խնճոյք կ'ըլլայ: Հով մը կը փրթի, ծառերը իրար կ'անցնին, Սօսիէն հսկայ ոստ մը կտրուելով կ'իյնայ հարսնետոններուն վրայ: Մարդու վնաս չի հասնիր, բայց չեն համարձակիր ոստերը կտրտելով տակը մնացողները ազատել: Կը վազեն ՎագրՖ, հայոց քով, կ'աղաչեն որ գան Սօսի ծառին ոստը կտրտեն հանեն, իրենք կը վախնան ծառի սուրբերէն»¹⁰:

Բարբառի սուսա բառը նաեւ տեղանուն է. այդպէս կը կոչուի Գարատուրան գիւղի վերի գերեզմանատունը, որուն մօտիկ՝ ոչ խոր ջրհորի մը մօտիկ, ժամանակին կար առանձին սօսի ծառ մը: Սօսի ծառը կը կոչուի նաեւ չինաւ, պարսկերէն է: Քեսապի գիւղերէն մէկը կը կոչուի Զընուօր կամ Զինարճըզ, իսկ Վարի Պաղճաղազը հիները կը կոչէին Գապաչինար (Մեծ Զինար):

Շրջանին մէջ կան նաեւ աղբիւրներուն քով տնկուած կամ աճած մեկուսի սօսիներ: Ծառը եւ հրապարակը հանրային սեփականութիւններ են: Աւանդութեան ուժով այդ ծառերն անձեռնմխելի կը մնան: Անոնցմէ փայտ հատել կամ զանոնք արմատախիլ ընելը մարդու միտքէն չ'անցնիր: Այդպիսի մէկական ծառեր կան Ներքի գիւղի, Զինարճըզի, Զագալճըզի եւ Զալմայի աղբիւրներուն կից: Մեծ հանդիսութիւններն ու պտոյտները կ'ըլլային հոն՝ անոնց շուքին տակ: Երկար տարիներ գործած է Զինարճըզի ճաշարան-զբօսարանը, որ 1920-ական թուականներէն դարձած Քեսապի, Լաթաքիոյ եւ Հալէպի կարգ մը հայ միութիւններու եւ շրջանակներու պտոյտներուն եւ հաւաքներուն հանդիսավայրը: Այս ծառին տակ ժողովուրդին հետ հանդիպումներ ունեցած են Նիկոլ Աղբալեանը, Համաստեղը, Բարսեղ Կանաչեանը, Ռուբէնը, Սօսէ Մայրիկը եւ շատ յայտնիներ:

⁹ Խ. ՄԱՏՈՒՌԵԱՆ, Խտրեկ, «Յուշամատեն Մուսա Լերան», էջ 100:

¹⁰ Յ. ՉՈՒԱՔԵԱՆ, Պատմական Անտիոքի եւ շրջակայից բնիկ հայերը եւ միւս հաւաքակա-նութիւնները, Երեւան, 2023, էջ 211:

Չազալճըդ գիւղի հրապարակին ալ նշանաւոր եղած է իր վիթխարի սօսիով: Աղբիւրն օժտուած է կրածոյ (béton) կամարածէ կառուցով մը: Ճակատին զետեղուած մարմարէ սալին վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը. «Շինեցաւ աղբիւրս ջրոյ զովութեան / ջանիւք եւ ծախիւք որդւոցն մեծին / Թրթռեան գերդաստանին վեհագունի / ի լոյս յիշատակ լուսաբնակ / հարցն իւրեանց ամսեանն Օգոստոսի / ի թուին Քրիստոսի 1969»:

Ամբողջ շրջանին մէջ մեծագոյնը կը նկատուի Ներքի գիւղի սօսին, որուն ցօղունը ունի 6,20 մ շրջագիծ: Անոր քով կը գտնուին աղբիւրը, կիղիցիկը՝ իր գերեզմանատունով, Ս. Աստուածածին մատուռը եւ ուխտավայրի խոհանոցի շէնքը, որ եղած է նախկին դպրոցի շէնքը: Հոն տեղադրուած են նաեւ գիւղի սանդն ու ձիթհանքը՝ պաթոսը: Աղբիւրը քանի մը անգամ վերանորոգուած է: Մինչեւ 1970 ունէր խորանածէ բարձր կառույց՝ քարէ ցած ջրդոնով, ամբողջ լայնքը գրաւող քարէ միակտուր գուռով: Խորանածէ կառուցին մէջտեղը դրուած խաչքարը իբր առնուած է քովի սրբատեղիէն, եւ կ'ենթագրուի ըլլալ ԺՆ.—ԺԶ. դարերու գործ: Խաչքարն ու քարէ ջրդոնը տեղադրուած են աղբիւրի նոր կառուցին մէջ: Խաչքարը ձեւով հայկական է, տաշուած է տեղական կարծր կրաքարի վրայ, ունի 40 եւ 33 սմ թելեր ու քանդակազարդ շրջանակ: Կիղիցիկը տակաւին գործող գերեզմանատուն է. այնտեղ՝ փշակաղնիին տակ, կ'երեւին քանի մը սրբատաշ քարեր, ուր ուխտաւորներ իրենց ուխտը կը կատարեն:

Ահաւասիկ այս հրապարակին մէջ՝ սօսիին տակ, գիւղացիները կը կազմակերպեն Բարեկենդանի եւ Վարդավառի խաղերը, կը վառեն Տոնտէզի խարոյկը, երաշտ տարիներուն կը պտտցնեն անձրեւաբեր Զեօմչա Կէլին (քեսապցիներու Նուրին կամ Պուպլատիկինը) տիկնիկը: Հանդիսութիւններուն մեծագոյնը կ'ըլլայ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնի համաժողովրդական ուխտագնացութիւնը: Ծառին տակ կիրակիէն՝ լոյս երկուշաբթի կը հնչեն փողն ու թմբուկը, կը դառնայ Քեսապի շուրջպարը, կ'օրհնուի ու կը բաշխուի հերիսան: 1959-ին Կիղիցիկին կից բացատին մէջ կը կառուցուի Ս. Աստուածածին մատուռը¹¹, ուր տեղի կ'ունենայ ուխտի օրուան Ս. Պատարագը¹²:

¹¹ Այլ տեղ սրբավայրը կոչուած է Ս. Ստեփանոս (տե՛ս Ա. ՍԱՖԻԱՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 123):

¹² Ներքի գիւղի Ս. Աստուածածին մատուռը (տե՛ս «Հասկ», 1959, թիւ 8–9, էջ 375):

3. ՁԻԹԵՆԻ

Բարբառով՝ ձիթինա: Oleaceae/ձիթենազգիներու ընտանիքին պատկանող *Olea europaea*, անգլ.՝ olive tree: Ձիթենին թուփի կամ ծառի կերպարանքով կը հանդիպի Քեսապի վայրի բնութեան մէջ՝ յատկապէս Կիւնիկ լեռան վրայ՝ ծովահայեաց լանջերուն, տեղ-տեղ պուրակներ կը կազմէ: Կ'աճի ժայռերու ծերպերուն մէջ, քարափներու պռունկին: Մշտադաւար է: Այս վայրի տեսակին պտուղը սրածայր է, շատ հասունը կը սեւնայ: Քիչ ձիթոտ է: Կրնայ եւ դառն ըլլալ: Կիրի ջուրին մէջ դառնութիւնը կը կորսնցնէ ու կը մթերուի:

Երբ տակաւին սածիլանոցներ չկային, մարդիկ հեռու գիւղերէ ու շրջաններէ կու գային ու վայրի ձիթենիի ոստերը կտրելէ ետք կոճղերը կը հանէին ու կը տնկէին իրենց արտերուն մէջ: Ձիթեստանները ձիթինկէօտ՝ ձիթենկուտ կը կոչեն: Ձիթենին կրնար պատուաստուիլ ընտիր տեսակներով: Պատուաստի գլխաւոր եղանակը շիւն էր: Կը սղոցէին ու կը ճեղքէին ճիւղը, ճեղքին մէջ կ'իջեցնէին պատուաստի շիւր, կճեպը կճեպին բերելով՝ ամրօրէն կը կապէին, ապա լաւ մը կը ծածկէին ճերմակ հողի ցեխով կամ կովու թարմ թրիքով: Յետոյ տարածուեցան պատուաստի աւելի արդիական միջոցներ եւ կերպեր:

Ձիթենիի կոճղը նաեւ կտրելով՝ կրնային քանի մը տունկի վերածել: Կրնային յօտել ծառը ու կոճղը իր ցօղունով տեղափոխել արտ: Ձիթենին այն հազուագիւտ ծառերէն է, որ կոճղը տեղահան ընելով, ուրիշ տեղ տնկելով՝ կ'աճի: 1947-ին հայրենադարձ ընտանիքներէն ոմանք իրենց ծառերը վաճառեցին հարաւի դրացիներուն, որոնք ուղտերով ձիթենիի կոճղերը տարին: Հիմա Լաթաքիոյ ճամբուն վրայ՝ Պլլուրանի հովիտին մէջ, երեւոյց հին ձիթեստաններն այդ օրերուն տնկուած են:

Խնամուած ծառը կը մեծնայ, տերեւն աւելի կը կանաչնայ, առատ ու ձիթառատ պտուղ կու տայ:

Ձիթեստաններէն բացի՝ ձիթենին նաեւ ներկայ էր այլ պարտէզներու մէջ: Հին պարտէզներն առհասարակ խառն պտղատունկերով կազմուած էին՝ թզենի, թթենի, նունենի, ձիթենի:

Ձիթենին օրհնեալ ծառ կը նկատուի քեսապցիներուն համար: Ձիթապտուղը՝ տէնը պըտօղ (տան պտուղ), պահեստի հիմնական ուտեստ է՝ աղջուրի մէջ դրուած կանաչը եւ ձէթով օծուած սեւը (հաղթօն): Ձիթապտուղէն արդիւնահանուած ձէթը՝ տէնընիթ, նոյնպէս հիմնական թացան է,

լայն գործածություն ունի Քեսապի խոհանոցին մէջ: Իւղն ու կարագը իրենց տեղը ունին, սակայն ձէթին վերապահուած են շատ տապկոցներ, սոխարածներ, փիլաներ, եախնիներ, ջրալի ճաշեր, գլորի տեսակներ եւ այլն: Հում ձէթը կը գործածեն աղցաններու մէջ՝ ծոթրինի փոշին, լոլիկի եւ պղպեղի մածուկին, թապուլէին հետ խառնելով եւ այլն:

Զիթհանքէն ետք ձիթապտուղի քամուած խիւսէն տանտիկինը ճրճք կը հանէր պարէնի համար: Խիւսը խորունկ ամանի մը մէջ ջուրով կը ծածկէր, կը շաղէր, կը խառնէր: Հատիկը տակը կը նստէր, իսկ կեղեւը կը ծփար մակերեսին: Ատիկա ճիճք կը կոչուէր. կը հաւաքէր, կը քամէր ու կը դնէր պտուկի մը մէջ՝ ճրճքուօն հոօց (ճիճթով հաց) եւ սամպուսէկ (տապկուած հացեղէն) պատրաստելու համար:

Զէթը լայն գործածություն ունի ժողովրդական բժշկութեան մէջ:

Այրուցքները բուժերու ամենէն տարածուած ձեւը տաք ձէթին մէջ կարմրցուած կտաւէ լաթերով ծածկելն էր:

Ականջի ցաւին պարագային՝ կտոր մը սխտոր կը ծեծէին ու կը դնէին ձէթին մէջ, ապա այդ ձէթէն կաթիլ մը կը հոսեցնէին ցաւող ականջին մէջ:

Սրուակ մը ձէթին մէջ մանր մուկեր կը դնէին ու տունը կը պահէին: Այդ ձէթէն կաթիլ մը կը դնէին ցաւող ականջին մէջ:

Մաշկի լայն պատռուածքները կը կապէին լաթին վրայ քիչ մը աղով ձէթ դնելով: Թարախակալած պատռուածքները կրկին աղ ու ձէթով կը ծածկէին:

Մաշկի բորբոքումին վրայ ձէթ կը քսէին:

Պնդութեան ատեն ձէթ կը խմցնէին՝ փորը կակուղցնելու նպատակով:

Գարնանամուտին ձիթենիի ծառերը մաքրելու շրջան է: Խիտ ծառը կը բանան, կը ձեւաւորեն: Ծաղկազարդին (Մառգարդուօր) եկեղեցին կը զարդարեն ձիթենիի ոստերով, երկու տերեւ խաչաձեւ իրարու անցընելով լամբակին վրայ կ'ամրացնեն, ոստ մը կը կախեն նստասենեակի պատին, ուր կը մնայ մինչեւ յաջորդ Ծառզարդար:

Զիթենին անջրդի հողերուն մէջ դանդաղ աճող ծառ է: «Զիթենին ուրիշի համար կը տնկեն»,— կ'ըսէին մեծերը: Ծառը կրնար շատ մեծնալ: Սեղանաչափ կոճղ ունեցող ձիթենիներ կային: Մեծ ձիթենիի բունը կրնար փշակներ ունենալ՝ բնական կամ փորուած, ուր գիւղացին իր ջրամանը, պաշարը մանգաղն ու միւս իրերը կրնար պահել: Կային դարաւոր ձիթենիներ: Ծովու թաղին մօտիկ՝ վերջերս արմատախիլ եղած Գարվա-

սաղային ձիթենին, զրոյցներու համաձայն, ունէր շուրջ 300 տարուան կեանք ու տակաւին պտղատու էր: Նոյն գիւղին մէջ Ս. Սարգիս կոչուող հնավայրին մօտիկ հողակտորը կը կոչուի Սուրբ Սարգիսին պատառը, իսկ այնտեղ գտնուող հսկայ ձիթենին՝ Ս. Սարգիսի ձիթենին:

Սրբացուած ծառ էր Քէօրքենց ձիթենին: Կը գտնուէր Գարատուրան գիւղի Քէօրքենց թաղին մէջ: Սրբատեղի էր, անոր փշակին մէջ կիներ մոմ կը վառէին, ուխտի լաթեր կը կապէին ու թաղի փոքրիկներուն կը հաւատացնէին, թէ նորածին մանչուկները անոր մէջէն կը հանեն, մինչ աղջիկ ծնունդները ծովէն կը բերէին...

4. ԿԱՍԼԱՅ ԿԱՄ ԴԱՓՆԻ

Բարբառով՝ կասլա կամ կէսլըծուօն: Rosaceae/վարդագգիներու ընտանիքին պատկանող *Prunus laurocerasus*, անգլ.՝ laurel tree, արաբերէն ու թրքերէն՝ դաւ: Դափնին յունական դիցաբանութեան մէջ ջուրի ոգի է, գեղեցկուհի ջրանոյշ՝ Dafne, գետի աստուծոյ աղջիկը. Ապոլլոն կը սիրահարի անոր, ջրանոյշը կը փախչի անկէ ու հօր օգնութեամբ կը փոխակերպուի ծառի: Սելեւկեաններու պետութեան ատեն մայրաքաղաք Անտիոքի արուարձաններէն մէկը կը կոչուէր Դաֆնէ, որ հելլենիստական ճարտարապետութեան ու արուեստներու բացառիկ վայր մը եղած է: Նշանաւոր են անոր դիցաբանական նիւթեր ներկայացնող խճանկարները: Անտիոքը ճանչցուած է «Դափնէի մօտ Անտիոք» անունով՝ Epidaphne:

Դափնիի մշտադալար անտառներ կան գրեթէ բոլոր գիւղերուն մէջ, բայց ամենէն աւելի՝ Գարատուրանի ձորին մէջ եւ զայն եզերող լեռնալանջերուն վրայ: Ծառը կրնայ շատ մեծ ըլլալ: Կայ որձն ու մատակը, երկուքն ալ կը ծաղկին, պտղատուին ծաղիկն աւելի մանր է, իսկ ոչ պտղատուին ծաղիկը մեծ ծաղեկեքոյլ է (*Laurus nobilis*): Տերեւը մուգ կանաչ է՝ նշտարածեւ, կարծր: Պտուղը մանր է, նախ՝ կանաչ, հասուննալով կը սեւնայ: Անկէ կ'արդիւնահանեն ձէթ, որ կ'օգտագործուի օճառի արդիւնաբերութեան մէջ: Բարբառին մէջ դափնիի պտուղին կ'ըսեն կէսլըպլտօղ՝ դափնիի պտուղ, իսկ ձիթապտուղին՝ տէնըպլտօղ՝ տան պտուղ:

Քեսապի անտառային տնտեսութեան մէջ շատ կարեւոր դեր ունեցած է եւ դեռ ունի դափնին: Ան գիւղացիին հոգատարութեան տակ եղած է միշտ: Գիւղացին կը մաքրէր դափնիի պուրակին գետինը աւելորդ թուփերէն, ծառի կոճղէն բարձրացող ոստերէն քանի մը հատ կը

ձգէր, որ իրարու մօտիկ հսկայական ծառեր դառնան: Դափնի ծառերու իւրաքանչիւր խումբ կէտը ունախ՝ դափնիի օճախ կը կոշուէր: Այդտեղերը արածող այծերու հօտերուն աղբը պարարտանիւթ կը դառնար այս ծառին համար, որ փարթամօրէն կ'աճէր եւ առատ բերք կու տար: Նոր բացուած գետիններուն մէջ թէեւ արմատախիլ կ'ընէին դափնին, բայց շրջապատին մէջ կը պահէին ու կը խնամէին զայն՝ անոր քով դնելով խաղողի որթեր, որ մագլցելով ծառն ի վեր՝ անոր ոստերէն կը կախուէին խաղողի առատ բերքով: Դափնիի պուրակին կէտէօտ (կասլուտ) կ'ըսէին: Հայրեր իրենց հարսնացող աղջիկներուն երբեմն կասլուտ մը օժիտ կու տային, այդ պատճառով ալ դեռ մինչեւ օրս կան վայրեր, ուր հողը մէկուն է, կասլուտը՝ ուրիշին: Այդպէս որոշեր են, այդպէս ալ շարունակուեր է:

Կասլուտները տէր ունէին: Կային նաեւ համայնական կասլուտներ: Այդպիսին էին Գարատուրանի Տունակ լեռան եւ անոր կից Տաուլա ձորին դափնիի անտառները: Պտղաքաղի ատեն Քեսապի շուկային մէջ (շուկայի օրը գիւղացիներուն համար շաբաթ օրն էր) քաղաքապետարանի մունետիկը կը յայտարարէր.

«Ասեցէք, Ժողովուրդ, երկուշաբթի օր պիտի սկսի Տունակի պտղաքաղը, պարկը առնողը թող Տունակ բարձրանայ, այս տարի կասլի տարի է, բերքը առատ է...»:

Շաբաթ մը ամբողջ շրջանի բոլոր գիւղերէն մարդիկ պտղաքաղի կու գային Տունակ լեռը:

Պտղահաւաքի կը մասնակցէին ընտանիքի բոլոր անդամները: Հոկտեմբերէն սկսած պտղահաւաքը կրնար տեւել մինչեւ Նոր տարի: Քաղը քարափներուն եւ բարձր ծառերուն վրայ չափազանց վտանգաւոր կ'ըլլար ուշ աշնան, երբ սաստիկ հովեր կը փչէին, ու ծառերը օրօրուելով կը ճռճոսային: Բարձունքներուն վրայ քաղը կատարող մարդը մէջքին կապած պարանը կ'օղակէր քանի մը ծառերու, որպէսզի իյնալու պարագային չգլորուէր անդունդն ի վար: Երկար ձողերով հարուածելով ոստերուն՝ պտուղը կը թօթուէին սաւաններու վրայ կամ ուղղակի գետինը ու անկէ կը հաւաքէին: Ամեն տարի կասլիներուն տակ կոկիկ մաքրութիւն կ'ըլլար:

Պտուղին եփը, որ սովորաբար իրիկուան եւ առտու կանուխ կ'ըլլար, կը կատարէին բակին մէջ. երկաթեայ խոշոր կաթսայի մը մէջ, որ ամբողջ տարին իր կրակոցէն չէին հաներ: Մէկ-երկու եռը կը բաւէր, յատուկ շերեփով մը կը ծեծէին եփը ու կը ձգէին, որ պաղի: Պաղ ջուր կ'աւելցնէին: Ձէթը կը բարձրանար մակերեսին: Ապա կը քաղէին ձէթի խաւը ու

կ'ամբարշին տիկերու մէջ: Եփուած պտուղը կը շորցնէին. անասնոց կեր կ'ըլլար: Եփուող դափնիին հաճելի հոտն ամբողջ ձմեռը բակէն չէր հեռանար: Մէկ-երկու հարիւր լիտր ձէթ հաւաքողը հարուստ կը նկատուէր: Ձէթի վաճառքով գիւղացին պարտքեր կը գոցէր կամ ալ շուկայէն բերուելիք իր ամենէն ժուժկալ պէտքերը կը գոհացնէր: Դափնիի ձէթը կը հաւաքէին ընդհանրապէս քեսապցի վաճառականները ու կ'արտածէին: Կը գործածուէր օճառի արդիւնաբերութեան մէջ: Արաբները կ'ըսեն սապունդաւ (դափնիի օճառ): 1925-ին դափնեձէթի ընդհանուր արտադրութիւնը եղած է 12 հազար հոխա, որ բերած է 650 օսմանեան ոսկի եկամուտ:

Քեսապի մէջ դափնեձէթի հումքով օճառի արդիւնաբերութիւնը կը սկսի 1940-ական թուականներէն: Քեսապի մէջ կը շարունակեն գործել օճառի քանի մը գործարաններ: Քեսապի օճառին բուժական զարմանալի յատկութիւններ կը վերագրուին:

Ներկայիս այս հումքի արտադրութիւնը կը շարունակէ եկամտաբեր ըլլալ: 1990-ական տարիներուն մէկ քիլո դափնեձէթը կ'արժէր շուրջ 200 սուրիական լիրա, իսկ վերջին պատերազմէն առաջ՝ 700, այսինքն՝ աւելի սուղ, քան սեղանի ձէթը: Հումքը կը սպառի ներքին եւ արտաքին շուկային մէջ:

Գիւղերուն մէջ դափնի ծառին շուքը կը փնտռուէր ամառ ատեն: Անաղմուկ, ծանր ու խիտ տերեւներ ունի, բայց շուքը զով է, հոտաւէտ: Հրաշալի շուրջպար մը նկարագրելու համար քեսապցիք սովորաբար կ'ըսեն. «Այնպէս վազ մը կոխեցին, որ գետինը թնդաց ու դափնիի տերեւները սարսուցին»: «Վազ կոխել» ըսել է շուրջպար ընել: Դափնի ծառերու բունին մէջ գիւղացին տախտակամած կը շինէր, կը փռէր կարպետ, կը շարեր բարձեր: Այս հիւղին շօժ՝ շուք կ'ըսէին: Շուքը կէսօրուան տաքին կը դառնար գիւղացիներուն ժամադրավայրը, ապա՝ ամառնային ննջարան:

Հիները խորովածի շամփուրը դափնիի ոստէն կը շինէին, ըմպելի ջուրի կուժին մէջ դափնիի տերեւ կը դնէին, նոյնիսկ մթերքներուն, իսկ խաղողի նորեփ ուռպէն փըրփէօր (փրփուր) ուտելու դգալը դափնի տերեւով կը շինէին կամ ուղղակի կը գործածէին իբրեւ դգալ: Դափնի տերեւ մը կը դնեն կարգ մը ճաշերու պատրաստութեան մէջ:

Խիստ ձմեռներուն, երբ հօտն ու արջառը արածել հնարաւոր չէր, վայրի դափնիի քանի մը կանաչ ոստ կը կախէին ախոռը: Թոնիրը կը բռնկեցնէին դափնիի ցախով (զըժժէօկ):

Ուտքի մկանացաւ (եկ) ունեցողներն իրենց ցաւոտ տեղերը կ'օծէին դափնիի ձէթով, որուն բուժիչ յատկութեան կը հաւատային:

Մարդիկ ուխտ կ'ընեն թիթեղ մը դափնիի ձէթ նուիրել կաթողիկոսարանին սուրբ միւռոնի պատրաստութեան համար: Միւռոնօրհնէքին ներկայ կ'ըլլան:

Շատ տուներու յոյսը եղած է դափնի ծառը: Կ'ըսէին. «Կասկիին կոճղը չի մեռնիր», կտրես հանես՝ տակէն կրկին կ'աճի, աւելի թարմ, աւելի փարթամ: Քեսապցին յաճախ ինքզինք նոյնացուցեր է դափնի ծառին: Ի զուր չէ ըսուած, որ քեսապցին այս լեռներուն կապողը դափնի ծառն է: Կը պատմուի, թէ հայրենադարձ քեսապցիներ ուզած են իրենց ծննդավայրը խորհրդանշող յուշարձան մը կառուցել: Համագիւղացի մը կէս լուրջ, կէս կատակ ըսած է. «Դափնի ծառ մը աճեցուցէք, կը բաւէ: Մեր գոյութիւնը խորհրդանշող աւելի գեղեցիկ բան չունի Քեսապի պատմութիւնը»:

Դափնին օրհնուած ծառ է քեսապցիին համար:

Սրբացուած ծառ մըն է Գարատուրանի Ս. Ստեփանոս մատուան առջեւ գտնուող դափնին: Ս. Ստեփանոս կառուցուած է 1908-ին՝ Գարատուրանի Ծովու թաղի բնակիչներու ջանքերով: Մինչեւ 1948 հոս գործած է Ազգային Նուպարեան վարժարանը: Հայրենադարձութեան հետեւանքով թաղը գրեթէ պարպուած է, ու մատուռ-դպրոցը՝ լքուած: «Երկիր եւ մշակոյթ» միութեան ջանքերով վերանորոգուած է: Հոս պարբերաբար Ս. Պատարագ կը կատարուի, կ'ըլլան մկրտութիւններ: Մկրտութեան աւագանն ունի արձանագրութիւն՝ «1915 Փետր.»։ Եկեղեցին կը գտնուի Գարատուրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղականութեան հսկողութեան տակ: 2014-ի ներխուժումին իսլամիստ ծայրայեղականները մտած են նաեւ այս եկեղեցին, դէս ու դէն շարտած անօթները: Եկեղեցւոյ կոչնակը գտնուեցաւ մօտիկ քարքարոտներուն մէջ: Այստեղ ուխտեր կը կատարուին: Նկատելի է, որ ուխտաւորները մեծամասնութեամբ իսլամ կիներ են: Կու գան հեռուոր տեղերէ՝ հաւատալով, որ Ս. Աստուածածինը խնդրակատար է ու իրենց ծնունդ կը պարգեւէ: Կը պատմուի, որ ընտանիքներ ամեն տարի կ'այցելեն ուխտավայրը, որ զիրենք բախտաւորած է նորածինով մը: Ուխտաւորներ հոս կը ձգեն գումար եւ սրբանկարներ:

Եկեղեցւոյ դռան կից կայ դափնի ծառ մը, որ ունի խոր փշակ: Այդտեղ կը դրուին կոչնակին թակերը: Ուխտաւորները ծառը ծածկած են հարիւրաւոր աղաքներով, այսինքն՝ ուխտաւորներու կապած լաթի կտորներով: Ծառը անձեռնմխելի է: Սրբացուած միակ դափնին է շրջանին մէջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Քեսապի շրջանին մէջ բնիկ հայոց կողմէ սրբացուած ծառատեսակներ են փշակաղնին, սօսին, դափնին ու ձիթենին: Փշակաղնին սրբավայրը խորհրդանշող ծառ է ու ըստ գիւղացիներու հաւատամքին՝ պաշտպանուած է Կիդիցիկ Պապուկին կողմէ, որ ոգեղէն մարդակերպ պահապանն է սրբավայրին: Դափնին եւ ձիթենին զանազան ուխտերու, բայց մանաւանդ ծնունդ ունենալու խնդրակատար սրբացուած ծառեր են: Աղբիւրներու կից սօսի ծառին տակ կը կատարուին հանդիսութիւններ, տօնակատարութիւններ եւ համաժողովրդական ուխտագնացութիւններ: Անոնք հանրային սեփականութիւններ են ու պաշտպանուած են աւանդութեան ուժով:

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ

Սրբացուած ծառ, փշակաղնի, սօսի, ձիթենի, դափնի, Կիդիցիկ, աղբիւր, Կիդիցիկ Պապուկ, արվանտ (վիշապ), ուխտ:

РЕЗЮМЕ

У местных армян в районе Кесаб священными считаются пробковый дуб, платан, лавровое дерево и маслина. Пробковый дуб символизирует святилище, и по поверьям сельских жителей человекоподобный дух Гихитсиг Бабуг охраняет дерево. Лавровое дерево и маслина, как исполняющие обеты и тем более просьбы о деторождении, считаются святыми деревьями. У родников под платаном отмечаются торжества, празднования и всенародные паломничества. Эти деревья являются общественной собственностью и защищаются силой предания.

SUMMARY

In the Kesap region, the evergreen oak, platan, laurel and olive trees are considered sacred by native Armenians. The evergreen oak is a tree symbolizing the sanctuary, and according to the beliefs of the villagers, it is protected by Kighitsik Papuk, who is the spiritual anthropomorphic guardian of the sanctuary. The laurel and olive tree are considered sacred trees for the fulfillment of many wishes, but especially for the birth of a child. Ceremonies, festivals and popular pilgrimages are held under the platan tree near the springs. They are public properties and are traditionally protected.

